

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի <<Նաիրիի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջների համաձայն հայտարարում է բաց մրցույթ հետևյալ թափուր պաշտոնները համալրելու համար.

- | | |
|---|------------|
| 1. Բժիշկ նյարդաբան | 1,0 դրույք |
| 2. Բժիշկ ներզատաբան | 1.0 դրույք |
| 3. Բժիշկ ուռուցքաբան | 1.0 դրույք |
| 4. Բժիշկ սրտաբան | 1.0 դրույք |
| 5. Բժիշկ վիրաբույժ ԱԱՊ ծառայության | 1,0 դրույք |
| 6. Բժիշկ վիրաբույժ հիվանդանոցային ծառայության | 2,0 դրույք |
| 7. Հերթապահ մանկաբարձ-գինեկոլոգ | 3.0 դրույք |
| 8. Ստողոգիական և բջջաբանական լաբորատորայի բժիշկ | 0.5 դրույք |

ՀՀ կառավարության 2011թ-ի հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջներով բաց մրցույթի մասնակից կարող է լինել ցանկացած անձ, ով կբավարարի ստորև նշված պահանջներին՝

1. Բարձրագույն և հետբուհական կրթության առկայություն համապատասխան մասնագիտությամբ,

2. Հինգ տարուց ավելի աշխատանքային ստաժի առկայության դեպքում՝ վերջին հինգ տարվա ընթացքում համապատասխան մասնագիտական կատարելագործման առկայություն,

3. Բժշկական էթիկայի կանոնների իմացություն:

Մրցույթին կարող է մասնակցել գրական հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության քաղաքացին, ինչպես նաև այն օտարերկրյա քաղաքացիները, ովքեր Հայաստանի Հանրապետությունում ունեն կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ, աշխատանքի թույլտվություն և ում կրթական փաստաթղթերը սահմանված կարգով ճանաչվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

Թափուր տեղի հավակնորդների կողմից ներկայացվում է՝

- 1) դիմում/լրացվում է տեղում/
- 2) մեկ լուսանկար 3x4 չափի,
- 3) քաղվածք աշխատանքային գրքույկից (աշխատանքային ստաժ ունենալու դեպքում),
- 4) ինքնակենսագրություն,
- 5) անձնագրի, բարձրագույն և հետբուհական (ու՜մ բժշկական բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելու ժամանակահատվածում օրենսդրությամբ սահմանվել է

հետրուհական կրթության պահանջ (ինտերնատուրա, կլինիկական օրդինատուրա)) մասնագիտական կրթության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթղթի (դիպլոմի), վերապատրաստման վկայականի (դրա առկայության դեպքում) պատճենները և բնօրինակները,

6) արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը,

7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դիմումատուի ցանկությամբ,

8) օտարերկրյա քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:

Անհրաժեշտ փաստաթղթերը հանձնելուց հետո մրցույթի մասնակիցը կծանոթանա այն իրավական ակտերի ցանկին, որոնցից բաղկացած է լինելու հարցատոմսը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ընդունվում են յուրաքանչյուր աշխատանքային օր՝ «Նաիրիի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում (հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, Չարենցի փողոց 196) բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10.00-15.00-ը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 06.04.2020թ.:

Մրցույթը տեղի կունենա 2020 թվականի ապրիլի 9-ին «Նաիրիի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում՝ ժամը 12:00-ին:

Մրցույթներին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել «Նաիրիի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի աշխատանքային խմբին, կամ 0224 2 23 75 հեռախոսահամարով:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների ներկայացված փաստաթղթերը հետ չեն վերադարձվում: